

M. Archam Poste Restante
Athènes (Grèce)

ՏԱՐԵԿԱՆ . . . Ֆրանս 4

ՎԵՅԱՄՍԵՍ . . . « 2

ՄԻՈՒԹԻՒՆ

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Ե. Տ Ա Ր Ի

ԱՐԴԵՆՔ

1900

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

Թ Ի Ի 40

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

«Միութիւն»ը 1899ի սկիզբէն մինչեւ օրերս՝ իշխող հարգ մը անպարտաճանաչ գործակաւորներու և ընթերցողներու՝ մեր կամքէն բոլորովին անկախ պատճառներով կանոնաւորապէս չը հրատարակուեցաւ։ Առ այս մեր յարգելի պարտաճանաչ բաժանորդներու ներուժամիտ ըլլալու շնորհը խնդրելով կը յանձնարարենք որ իրենց բաժանորդագրութեան տարեջրանի լրումը հրատարակուած թիւերու վրայ հաշուեն։

«Միութիւն»ը ըստ առաջնոյն ամենայն կանոնաւորութեամբ պիտի հրատարակուի ամիսը մի անգամ, տարեկան 4, վեցամսեայ 2 ֆրանք բաժնեգնով, կանխիկ վճարելի։

«Միութիւն»ը ինչպէս ցարդ՝ նմանապէս յետ այսու պիտի պահէ իր անկողմնակալ ուղղութիւնը, հակառակ կուսակցամոլ դասակարգի այն վուճ առարկութեանց թէ՛ «Միութիւն»ը Դաշնակցութեան կողմը հակած է։

«Միութիւն»ը մինչեւ հիմա ոչ մի կուսակցութեան պատկանած է, և ոչ ալ պիտի պատկանի երբեք։

Ամեն անոնք՝ որ բաժանորդագրուելով թերթէն 3 թիւերը կստանան ու բաժնեգինը անվճար կը թողուն, չորրորդ համարը չպիտի ստանան։

«Միութիւն»ի անկանոն հրատարակութեան գլխաւոր պատճառն՝ ինչպէս յայտնի է նիւթական անձկութիւնն եղած է, որուն համար փոխանակ թերթը բոլորովին դադրեցնելու ներկայ ծաւալով հրատարակել որոշեցինք։

«Միութիւն»ի յաջորդ թիւը լոյս կը տեսնէ Հոկտեմբեր 1 ին։

ՄՈՒՆԱՆՔ ՄԵՐ ՓՈԲՐԻԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յեղ. կուսակցութեան մը վարչութեան գլխաւոր անդամներէն միոյն կողմէ մեզ զըրկուած մի նամակէ հետեւեալ մասը պատշաճ կը համարինք հրատարակել։

* * *

Ժամանակ է որ մենք մեր փոքրիկութիւնները մոռնանք. Այդ թերութիւնները ուղղակի հետեւանք են մեր դարաւոր անպատկանքին, չպէտք է այլեւս գոյութեան իրաւունք ունենան այն ժամանակ, երբ բոլորիս առջև արձանացած է մի գործ, որին ազգերի պատմութիւնը ամեն ժամանակ և ամեն երկրի մէջ Սուրբ է անուանել։

Ի՞նչ ժամանակ մեր նախահայրերը իրարու «փոքրիկութիւններ» ներողամիտ չգտնուելով իրենց ընդհանրական, վաղանցուկ կրքերին յագուրդ տալու համար միմեկու ինչ օտարի Պարսկի, Յոյնի . . . հետ և իրենց երկիրը իրենց ձեռքով էին աւերում ու քանդում։ Այն հայը, որ իւր ընկերոջ, իւր արիւն կրողի

փոքրիկ թերութիւնը, հասցրած չնչին վիրաւորանքը չէր կարողանում մոռնալ, - ոտնակախելով մարդկային, ազգային ամեն արժանապատուութիւն, օտարին հըռ հպատակը ստրուկ դառնալը իրեն պատիւ էր համարում։ Եւ այդ օրինակները կրկնուեցան ու կրկնուեցան։ Մեր սերունդը մեր քաղաքական կեանքի տուած այդ սրտաճմլիկ դաւերից օգուտեց, խոյս տուեց կրկնութիւններէ։ — Պատմութեան դասը մենք մոռացած էինք։

Նորագոյն ժամանակները մէջ, նոյն իսկ հիմա, երկու հայ իրարու հետ անձնական վէճի պատճառով՝ առաջին պատահած առթիւց օգտուելով, սովորութիւն ունին քանդել, կործանել ազգային, հանրական հաստատութիւնները — դպրոց, եկեղեցի, դատարան . . . դա միջոց է անձնական վրէժը լուծելու։

Յեղափոխականութիւնը մեր մէջ մտցնում էր նոր կեանք, նոր իտէալ, նոր գաղափարներ կարելի էր կարծել որ տարբեր ուղիքներ տարբեր սկզբունքներ ընդունելով հանդերձ, զատ բանական բաժնուելով մէկտեղ, կարող պիտի լինէինք ամենքս համերաշխութեամբ՝ մի նպատակի — սարսափալից հայրենիքի ազատութեան դիմելու։ Եւ, մի առ ժամանակ, պատմութիւնը արձանագրեց այն ուրախալի փաստը, որ արդարեւ տարբեր ուղիքներով ընթացող խմբերը՝ կարող էին ծառայել հանրական միեւնոյն նպատակին։ Դա մի սր է յուսադրիչ երեւոյթ էր մեր մէջ, սակայն այդ ուրախալի ժամը երկար չտևեց։ — Պօլսոյ շուկայական գրականութիւնը, ճիշդութիւններ ուսումը անհետեւանք չէր կարող մնալ։ Եւ ահա հրապարակի վրայ կամաց կամաց երեւացին մեր նսխիկ Մերութեանները իրենց սովորական զգեստով, գոյնով, մի թոտով և ամենաջնջին «փոքրիկութիւններ» օգտուելով, քանդեցին գործը ու տարիներ ջանքերով շինուածը աւերակ դարձրին։ Գործը քանդելը անձնական վրիժառութեան միջոց նկատուեց։ Մեր անհարազատ նախահայրերի անհարազատ զաւակները բացառութիւն կազմել չուզեցին։ — Եթէ Ա. Բ. ի կարծիքով, անձնական մի թերութիւն ունի, ապա հարկաւոր է Բ. ի կարծիքով, անպատճառ քանդել Գ. ի կուսակցութիւնը, հիմնայաւոր անել, զրպարտել, բաժնաւոր, ինչո՞ւ — որովհետեւ Ա. Բ. ի մէջն էր, նրա համակրող էր կամ հետեւող։ — Սկսեցան բէկցիան, եղբայրասպան կռիւք առաջ գնաց. և ահա յառաջացան Մերութեանների բաղձացեալ այն աւերակութիւնները, որոնցից դուրս իրաւամբ զարմանում էք, ձեզ հետ և շատ շատերը։

Ի հարկէ կայ պատմութիւն, որ իւր արդար վճիռը պիտի արձակէ. բայց այդ վճիռը ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ օրական կեանքով ապրող այդ սովորներէ համար։

Բաժնեգնի փոխարէն ամեն երկրէ կընդունուի նամակագրոյժ (փուլ)։

Ամեն անոնք՝ որ բաժանորդ կը գրուին և առաւաւելն երեք ամիսէն չեն վճարեր չորրորդ ամիսը թերթ չպիտի ստանան։

Ասացէ՛ք ուրեմն. այս աւերակութիւնից յետոյ, ժամանակ չէ՞ որ մենք մեր «փոքրիկութիւններ» մոռնանք և տխուր անցեալի օգտուելով՝ իրարու մօտենանք, բազուկ բազկի տանք և ներքին ու արտաքին թշնամու դէմ ելնենք։ — Ժամանակ է, ժամանակ։

ԼՐՏԵՍ ԱՐՓԻԱՐԻ ԽՆԴԻՐԸ

«Միութեան» 39 թիւին մէջ կարգացի ինձ ուղղուած երկու պատասխանները (Ա. Բ. Զ. Կ. Գ. ստորագրութեամբ)։

Որովհետեւ կամայ կամ ակամայ իրար հասկընալ չենք ուզեր, և ըսի ըսանքուր վերջը չը պիտի գայ, խնդիրը վերջնականապէս փակելու համար կառաջարկեմ գործնական միակ միջոցը. այն է՝ գումարել Ը ն կ ե ր ա յ ի ն Դ ա տ ա ս տ ա ն ը և այնտեղ լսել երկու կողմերու փաստերը, ապացոյցները, գրական փաստերը (տօքիւման), վիճանքը և վիճանքու գրաւոր հաղորդակցութիւնները եւ այլն, և վերջնական վճիռը հաղորդել հայ հասարակութեան։

Եւ միմեկս՝ կը խոստանամ և կարող եմ հաստատել Արփիար Արփիարեանի Լ ր տ ե ս մ ա տ ն ի չ մը լինելը. այո՛, կարող եմ հաստատել հետեւեալները, սրոնց ապացուցումը բացարձակապէս կապացուցանեն Արփիարի Լ ր տ ե ս — Յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն մը լինելը, թո՛ղ ուրիշներ, եթէ կը ցանկան, իրենց կարգին ապացուցանեն իրենց դիտածները. նոյն Ը ն կ ե ր ա յ ի ն Ա տ ե ա ն ի ն մէջ։

1— Բաժնէ Սըլանտիտի մէջ ժողով գումարելին։

2— Տիրան Բէլէկեանի մասնակցութիւնը յեղափոխական գործին և նոյն իսկ ցոյցի կազմակերպութեան։

3— Արփիարի նտղմի հետ ունեցած սերտ յարաբերութիւնը։

4— Ցոյցին նախապէս ի ա ղ ա ղ ա ս ի ր ա կ ա ն որոշուած լինելը և յետոյ զէնք մտցուիլը։

5— Թուրք կառավարութեան ցոյցի օրը դիտնալը և կանխապատրաստութիւններ տեսնալը։

6— Կիւրճեանի դէմ Հ ա յ ր ե ն ի ք ի մէջ Արփիարի կողմէ Ը ն կ ե ր ա յ ի ն ա տ ե ա ն պահանջուիլը։

7— Բարակէօղեանի ա ն ի ր ա լ ս պաննութիւնը և սպաննողներուն և սպաննել տուողներուն հ ա ս ա ր ա կ ո ճ ր ա գ ո Ր ծ ն եր նկատուիլը։

8— Յանուն յեղափոխութեան անհատներէ պահանջուած զրամներուն մի մի ա յ ն Պօլսոյ կոմիտէին վճարուիլը սպառնալեօք պահանջուիլը։

9— Արփիարի Բերայի Ս. Ներրորդութեան եկեղեցին մտնելը առանց արգելքի։

10— Մաքսիմօֆին Արփիարի կողմէ ներկա-

յացուցուած որոշմանգիրը:

11— Եկեղեցիին դրանք դէմի բ ա ս ա ժ ին վրայի սենեակներէն եկեղեցիին բակը մի եւ լ լ ա բ հայերէն գրուած թուղթեր նետուիլը և այդ սենեակներուն լրտեսներու կողմէ վարձուած լինելը:

12— Արփիարին եղբորը՝ Ալէքսանին (եղբոր անունները շատ որոշ չեմ գիտեր, բայց կարող եմ ճշդել ի հարկին) Մայր եկեղեցին ապաստանողներուն միևնոյն մի՛ եւ լ լ ա բ խորհուրդը և հրահանգը տալը:

13— Մի՛ եւ լ լ ա բ ին հետեւիք ծանր չարիքներուն առաջը առնուիլը չէզոք անձի մը կողմէ:

14— Գաղանկցութեան Կ. Պոլսոյ կոմիտէին Արփիարը մատնիչ մը ճանչնալը և տուած մահովճիւղը:

15— Գր.Արծրունիէն ստացած 2000 բուրլին Արփիարը իւրացնելը:

16— Լեւոն Բաշալեանի Արփիարի միջնորդութեամբ Պոլիս վերադարձը:

17— Ռուսաստանի մէջ Արփիարին նար-Պէլը լրտեսելը:

18— Հռչակաւոր Միւղայ ազիրը ստորագրելու կասկածելի պարագաները և այդ մեղայագրին հաւատարիմ մնալը:

19— Հրոսակախումբներուն կառավարութեան մատնել ուղելը:

20— Ա. Նահապետեանի Արփիարի կողմէ մատնուիլը:

Այստեղ կը յայտարարեմ որ «Միութիւն» թերթի մէջ գրուած «Լրտես-Յեղափոխական» ողբերգութեան հեղինակն ալ ես եմ, հետեաբար աւելորդ յոգնութիւն է ուրիշ դրական փաստեր մէջ բերել, այդ ողբերգութեան է ա կ ա ն կէտերուն, ինչպէս վերը 20 յօդուածներով յիշեցի, պատասխանատուութիւնը կ'ստանձնեմ:

Բայց մի խնդիր կը ներկայանայ, ինչո՞ւ համար մինչև ցարդ Արփիար ինքը չը ջանաց հերքել իր մասին գրուածները, ամբաստանեալը ամբաստանողին հետ դէմ առ դէմ գալու է, կողմնակի մարդկանց հերքումները նշանակութիւն չունին, քանի որ ը ո թ ը ս աւաներու մէջ կը սահմանափակուին:

Ուրեմն, Ը ն կ եր ա յ ի ն Դ ա տ ա ս տ ա ն կազմիւն առաջ, հարկաւոր և անհրաժեշտ է լսել Արփիարի ինքզինքը արդարացնելու փաստերը, թերևս ինքը կը խոստովանի իր մեղքը և կամ թէ չը կրնար բացատրութիւնը տալ մեր յիշած գէպերուն. հետեաբար այս պարագային աւելորդ յոգնութիւն մը կըլլայ Ը ն կ եր ա յ ի ն Ա տ ա ն մը կազմելը և նոյն իսկ պէտք ալ չըլլար . . .

Արդ, թո՞ղ մէկ կողմ քաշուին Ա ը շ աւ ի ը ները, Գ. Կ. Գ. երը, * * * ները և ուրիշ փաստաբանները. և Արփիար Արփիարեան իր ճկուն գրելով իր ձեռքին տակ գտնուած Ն ո Ր Կ ե ա ն ք կամ Մ ա Ր տ թերթերուն մէջ սկսի հերքել Լ ը տ ե ս-Յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն ի մէջ գրուածներուն է ա կ ա ն կէտերը, որոնք 20 յօդուածներով մատնանիչ ըրած եմ. Եթէ ջանաց հերքել, ուրանալ կամ խեղաթիւրել ճշմարտութիւնը, այն ժամանակ իսկապէս անհրաժեշտ կը դառնայ Ը ն կ եր ա յ ի ն Ա տ ա ն նին կազմուիլը:

Արփիար նոն արտաւորէ հերքել ուրիշներու կողմէ գրուածներն ալ, օրինակ «Շարժումի», «Լ'Արմենի»ի, «Դիմակաւորներու», «Ի Ռաջ Հան Գիտ»ի, «Իրօշակի Յաւելուած» ներուն մէջ յայտնուած այն ամբաստանու-

թիւները, որոնք չեն պատկանիր իմ յիշած 20 յօդուածներուն, որպէս զի աւելորդ կրկնութիւններ չ'ըլլան:

Գաղով Ը ն կ եր ա յ ի ն Ա տ ա ն ի պումարիւլ ծախքին որոնց կողմէ հայթայթուելու խնդրին, դարձեալ կը կրկնեմ և կը պնդեմ թէ այդ պարագանութիւնը զլխաւորաբար կը ծանրանայ վ եր ա կ ա ղ մ ե ա լ ներու վրայ: Որովհետեւ մենք ամբաստանողներս, բնականաբար կը պատկանինք, տարբեր կուսակցութիւններու, հետեաբար մենք Արփիարը յիշուած գէպերով լրտես — դաւաճան մը ճանչնալով հանդերձ մեր գործը չ'ը շարուակներ յանուն յեղափոխութեան, և պէտք ալ չունինք մեզ համար ստոյգ և ճշմարտութիւն համարուած իրողութիւններուն ճշմարտութիւնը և ստուգութիւնը կրկին և կրկին տպացուցանելու:

Սակայն վ եր ա կ ա ղ մ ե ա լ ները պէտք ունին այդ բանին, որպէս զի խղճի մոտք և առանց կասկածի շարունակեն գործել Արփիարի հետ, քանի որ կենտրոնական կոմիտէին գլխավոր և ղեկավարող անդամն է այն: Այո՛, վերակազմակերպը տրամաբանօրէն վայրկեան մը պէտք է կասկածին, այսքան բազմաթիւ գէպերուն և ամբաստանութիւններուն բոլորն ալ զրպարտութիւն չեն լինիր պէտք է մտքէ անցնեն, եթէ խօսուածներուն ու գրուածներուն կէսն, քառորդն ալ ճշմարտութիւնն, դարձեալ բաւական են Արփիարը իրենց մէջէն արտաքսելու . . .

Ուրեմն, այդ ծախքը ազգը պիտի հոգայ, բայց այդ բանին ձեռնարկողները վ եր ա կ ա ղ մ ե ա լ ները պէտք է լինին, անշուշտ մենք ալ պարտաւորենք օգնելու այդ ձեռնարկին, միայն թէ նախաձեռնող լինելու պարտաւոր չենք: Նոյնպէս ես ինքզինքս բնաւ պարտաւոր չեմ դգար 30—40 օրուայ ճանապարհ կտրել 200 ոսկիի մօտ ծախս մը ընելով. տարբեր բան է եթէ նախական կարողութիւնս ներէր. ես անհատապէս այդ ծախքը կը հոգայի և գուցէ ուրիշներու ճանապարհածախսըն ալ հոգայի, յանուն Սուրբ Գործին: Բայց, զժբաղդաբար, նախապէս անկարող եմ այդ ծախքը ընել և մանաւանդ եթէ Ը ն կ եր ա յ ի ն Ա տ ա ն նին ներկայանամ իմ իսկական անունովս, պարտաւորուած պէտք է ապրիմ Եւրոպական կամ Ամերիկեան ազատ քաղաքի մը մէջ . . . այս պարագան ալ ի նկատի ունենալու է: Եւ ո՞վ պիտի հոգայ զիս և ընտանիքս այդ ազատ քաղաքներու մէջ. ես ծոյլ չեմ, ընդհակառակը շատ աշխատաւոր եմ. բայց արհեստս այնպիսի արհեստ մըն է, որ այդ երկիրներուն մէջ մէկ կ ու տ չարժէր. առնուազն երկու տարի ապրելու նախական կարողութիւն ունենալու եմ, որպէս զի յետոյ կարողանամ թերևս արհեստս ի գործ դնել և անոր շնորհիւ ապրել և ապրեցնել ընտանիքս:

Ահա, այս պատճառով հարկ անհրաժեշտ է, որ այդ ծախքերը ազգը հոգայ վ եր ա կ ա ղ մ ե ա լ ներու նախաձեռնութեամբ և մեր աջակցութեամբ, և հաւորուած դուժարները պէտք է ի պահ դրուին վըստահելի չէզոք անձի մը մօտ:

Սակայն անհրաժեշտը և նախնականը, ինչպէս վերը ըսի, Արփիարին հրապարակաւ պատասխանելն է, այդ պատասխանէն կախուած է Ը ն կ եր ա յ ի ն Դ ա տ ա ս տ ա ն կազմի, լու կամ չը կազմուել խնդիրը:

Ընթերցող հասարակութիւնը երկու կողմն ալ լսելով եղրակացութեան մը պիտի յանգի,

եթէ երբեք ճշմարտութիւնը և իրողութիւնները յեղաշրջուին և խեղաթիւրուին, այն ժամանակ խնդիրը հասարակաց դատաստանէն կարող ենք փոխադրել մասնաւորաց ատեանին — ընկերային դատաստանին, որոշել թէ այդ ընկերային ատեանը ի՞նչ պայմաններով պէտք է կազմուի, որու մասին շատ գրելիքներ և առաջարկներ ունիմ:

Պ. Արշաւիրին ուղղակի տալիք պատասխան մը չունիմ, միայն սա չափը կը յիշեմ, որ մի անգամ ևս կարգայ «Միութիւն»-ի 28—29—37 թիւերը և իր վերածներուն պատասխանը անոնց մէջ փնտռէ . . . առանց գրածներուս միտքը յեղաշրջելու:

Որովհետեւ ժամանակ չունիմ երկարօրէն կրկնելու նոյն բաները, բուն խնդրէն չը չեղելու համար աւելի յարմար առիթով մը կը վերադառնամ Պ. Արշաւիրի մի քանի հարցումներուն: Միայն այստեղ այնքանը յայտարարեմ, որ Արփիարի հետ անձնական հակառակութիւն մը մինչև այսօր չեմ ունեցած և թէ մինչև իր Լօնտոն երթալը յարաբերութիւնս պահած եմ, իրեն հետ, սակայն միշտ գիտնալով դիմացինս . . . և արդէն Պոլսոյ մէջ ալ ուրիշ կերպով վարուիլ կարելի չէր . . .

Այս պարագաները պատրաստ եմ նոյն իսկ Արփիարի խոստովանութեամբը հաստատել Ը ն կ եր ա յ ի ն Ա տ ա ն նին մէջ: Իսկ ի՞նչ կը վերաբերի անոր նկատմամբ մեր պ ա շ տ ո ն ա կ ա ն հակողութեան և կարգադրութիւններուն, այդ հասարակութեան գիտնալիք բանը չէ. ատկա կուսակցական գաղտնիք մըն է, և այն բանն ալ որ կարելի է թերևս հասարակութեան հաղորդել, այդ ալ մի միայն մեր մահէն յետոյ գուցէ հաղորդուի . . .

Իսկ գաղով Գ. Կ. Գ. ին, կը խրատեմ որ իր հարցումներուն պատասխան ստանալու համար կարգայ «Իրօշակ»-ի 15 Դեկտ. 1899 Յաւելուածին 28-29 էջերը:

«Ժողովուրդի չէզոք դասակարգը չէ կարող որ ոչել թէ Արփիար Արփիարեան իսկապէս մեղաւոր է թէ արդար» կըսէ յիշեալ Պարոնը: Բայց ես ալ կը պնդեմ, որ նոյն իսկ Պոլիս այդ չ է զ ո ք ըսուած դասակարգը համոզուած էր Արփիարին մեղաւոր լինելուն, նոյնպէս Տիւրան Բէլէկեանին լրտես լինելուն, ժողովուրդը շատ լաւ կը ճանչնայ իր ճշմարիտ բարեկամն ու թշնամին. միայն անոնք չեն ուղեր ճանչնալ, որոնք բնականէն կամ ապուշ են և կամ մասնաւոր կապ մը, շահ մը ունին Արփիարին հետ: Այո՛, սիրելի Պ. Գ. Կ. Գ., Պոլսեցի չէ զ ո ք ներէն հարցուցէ՛ք Արփիարի, Բէլէկեանի, Տէր Մինասեան չիք Վահան վարդապետի, Պիւլպիւլեանի և նմաններուն ի՞նչ ըլլալը . . .

Մեր դրական փաստերը կուղէք գիտնալ, սակայն չեմ հասկնար թէ դրական խօսքով ի՞նչ կուղէք յայտնել: Արդեօք դրական փաստեր չէ՞ք նկատեր «Լրտես-Յեղափոխական»-ի մէջ նկարագրուած գէպերն, որոնք իրողութիւններ լինելով, ինքնին դրական փաստեր կը կազմեն, երբ դեռ հակառակը պնդողներ կամ ուրացողներ չեն զրոնուիր . . .

Չը հ եր ք ու ա ծ և ա ն ու ը ա ն ալ ի գէպերը և իրողութիւնները արդեօք խօսուն, կենդանի և զրական փաստեր ու պայցոյցներ չէ՞ք ընդունիր . . .

Եթէ այդպէսէ, աւելորդ յոգնութիւն յանձն է ք առ եր դ ու , ք Պ. Արշաւիր և ուրիշներ թըղ-

Թեր ու թերթեր մրոտելու և նոյնիսկ կա ս-
կա ծ ե լ ի ն ձ ր ք ե լ ու մ ե Վ ն մ ա ն ա ն մ ե զ-
ն ե ր կ ա ս կ ա ծ ե լ ի ց ու ճ ր ք ե լ ու հ ա ս ա լ ա կ ու-
թ ե ա ն ա ո ճ և . ձ ե ր խ ի ղ ճ ե ր ու ն ը ս ե լ ի ք չ ու-
ն ի մ , ո ր ո ն ջ մ է ու ն ե ն ա լ ի ղ մ ի շ ա կ ր կ ի ն է ք :
Աւելի լաւ կընէիք ուրեմն , Արփիարին առմե-
ղութիւնը հաստատող ձեր դ ր ա կ ա ն փ ա ս-
տ ե ր ը մ է ջ բ ե ր է ի ք , ի բ ր վ ա ր ձ ու ա ծ փ ա ս-
տ ա ր ա ն ն ե ր , ձ ե ր ա ն մ ե ղ գ ա ու ն ու կ ը
պ ա շ տ պ ա ն ե լ ու հ ա մ ա ր , ք ա ն թ է մ ե ղ ի պ է ս
խ ե ղ ճ ու կ ր ա կ ի ն ե ր կ ա ս կ ա ծ ե լ ի դ ր պ ա ր տ ի չ ն ե ր
ց ու ճ ն ե լ ու

Մեղա՛յ , հաղա՛ր մեղա՛յ , որ մեր օրով կա-
տարուած իրողութիւնները յիշելու մեղքը գոր-
ծեցինք , մեղա՛յ , գարձեալ , որ այդ իրողու-
թիւնները տգիտաբար գ ր ա կ ա ն փ ա ս տ ե ր ու-
տ ե ղ ը ն դ ու ճ ն ե ց ի ն ք :

Ամեն բան մէկ կողմ ձգենք . ըսէք միայն
ինձ թէ Արփիար ի՞նչպէս է կեղծեցին մտաւ , ի՞նչ-
պէս որոշմանդ իրը . Մաքսիմովին հաղորդեց
յոյս ցերեկով և կառավարութեան աչքին առաջ .
իբրև յեղափոդական կատարեց այդ մեծ քա-
ջադործութիւնը , այդ աննման հերոսութիւնը :

Եւ պէտք չէ մոռնա՞նք ու չփոթենք թէ
խնդրոյ տակ եղող Արփիարը այն Արփիարն է ,
որ ըստ վրկայութեան Ա . Չօպանեանի՝ «բա-
յոյական տկարացման լաւ ակաւնջ կտխեցէ՛ք»
մէկ տխուր վայրկեանին ծընունդն է հռչակաւոր
մ ե ղ ա յ ա գ ի ր ը » :

Այս տողերէն , որոնք իրենց մէջ կը պարու-
նակեն բացարձակ ճշմարտութիւնը , այդ օմե-
ղայագրէն՝ յետոյ կը կարծէ՞ք թէ Արփիար մը
խանդավառ տաղաւորութեան մը տակ ցան-
կացեր է Ջանկիւլիաններու , Վարդ-Պատրի-
քովներու , Բաբկէն-Սիւնիներու , Սերոբ Փա-
շաներու և ասոնց նմաններու օրինակներուն
հետեւելով այդ — ամենամեծ հերոսութիւնը ,
այդ ամենավառագաւոր քաջադործութիւնը կա-
տարել

Եթէ այսպէս կը հաւատար , Պ ր ա վ օ
Իսկ եթէ այսպէս չէք հաւատար , ուրեմն
հաւատացէ՛ք թէ ուրիշի մը — Տաճիկ կառա-
վարութեան — թելադրութեամբ և ուրիշի մը
— ոչ թէ ազգին կամ Յեղափոխութեան — շա-
հուն համար գործեց այդ հրաշագործութիւ-
նը

Ուրե՛մն . . . Արփիար Լ ր տ ե ս - Յ ե ղ ա -
փ ո խ ա կ ա ն մ ը ն է՛ր

ԹԱՓԱՌԻԿ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՏԵՆԻ ԱՆՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ (1)

Ամեն տեսակ գործերու մէջ անկեղծութիւն
պէտք է փնտռել . երբ ո՛ւր է խնդրոյ մէջ չկայ
անկեղծութիւն , յաջողութիւն անկեղծութիւնը պար-
զապէս յիմարութիւնն է :

«Միութիւն»-ը և ո՛չ մի կուսակցութեան
հետ կապ չունենալով , առանց անոնց էնթրիք-
ները նկատի առնելու , անկեղծօրէն ու ան-
կողմնակալօրէն Բարիդի մէջ Տիար Մինաս
Չերազի նախագահութեան տակ «Խառն - Ժս-
ղով» մը գումարել առաջարկեց . և միեւնոյն ժա-
մանակ խնդրեց կուսակցութեանց կեդրոններէն
որ հաճին իրենց տրամադրութիւնը յայտնել Տ .

(1) Մենք գիտնալով որ այդ պայմաններու
տակ Ընկերային Ատենին յաջողութիւնը ան-
կարելի էր , մեր անցեալ թուով չը բողոքեցինք
թողով նախաձեռնարկ եղողներուն որ փորձով
տեսնեն անյաջողութիւնը :

Մինաս Չերազի , և ոյժ տալ ժողովի իրակա-
նացման , եթէ կուզեն Սուրբ Գործոյն նպաս-
տաւոր ծառայութիւն մը մատուցանել , իսկա-
կան յեղափոխականները միայն ծախահարեցին
մեր առաջարկը . գիտնալով որ Ազգին ցաւերը
դարմանելու միակ միջոցն էր այդ :

Տիար Մինաս Չերազ՝ մեր առաջարկը յա-
ջողցնելու բոլոր զօսաւորութիւնները ստանձ-
նեց , և պատ . l'Arménie ի մէջ հրաւեր կար-
դաց բոլոր կուսակցութեանց որ իրենց Բարիդի
ներկայացուցիչները ցոյց տան , նախնական
բանակցութիւնները կատարելու համար :

Տիար Կ . Բասմաճեան՝ սիրով յանձն առաւ
Միութեան սկաններու կողմէ իբր պատգամաւոր
ժողովի ներկայանալու առաջարկը :

Բուն Հնչակեան կուսակցութեան կեդ-
րոնը՝ մեզ զրկած պաշտօնական նամակով մը
յայտնեց համաժողովին ինչիւր , խոստանալով որ ,
երբ միւս կուսակցութիւնները Տ . Չերազի հրա-
ւերին պաշտօնապէս պատասխանեն , ինք պատ-
րաստ է իր ներկայացուցիչը անմիջապէս կտր-
գել և անոր պէտք եղած հրահանգները տալ :
Արդէն Կեդրոնն իր կուսակցութեան օրկան
«Հնչակ» պաշտօնաթերթով Հայկական Գօնկրէս
մը առաջարկեց :

Հ . Յ . Դաշնակցութիւնը իւր «Դրօշակ»
պաշտօնաթերթով Բարիդի իր ներկայացուցիչը
ցոյց տուաւ :

Ամերիկա հրատարակաւոր «Հայրենիք»
թերթը իր քանի համարներու մէջ երկար յօդ-
ուածներ նստրելով բուռն ճիգեր ըրաւ մեր
անկողմնակալ առաջարկի յաջողութեան հա-
մար :

Ի՞նչ ըրաւ Հնչակեան ազգային
յեղափոխականն՝ Կ ու ս ա կ ց ու -
թ ե ա ն մ ե ծ կ ե դ ր ո ն ը (Արփիարը ինք՝ մի-
նակը) և ի՞նչպէս վարուեցաւ այս խնդրոյ հետ :
— Իր սովորական խորամանկ ընթացքով
երեք ժամի առաջ ժողովուրդի կողմանէ
պաշտպանուած Միութեան հրատապ խնդիրը
ի՞նչպէս մարելու ստորին միջոցներու դիմելով
արդեւք հաւանդիսացաւ . նմանապէս այսօր
«Ազգ . Խառն Ժողովի» գումարման քանքերը ի
դերեւ հանելու միակ միջոցը ընտրեց Բա-
րիդաբնակ ազգայիններէն քիչ չատ համբաւ
սւնեցող Պ . Պ . Յակոբեանի և Իսգէնտէրի ա-
ռոնձին նամակներով դիմել . խնդրելով որ Ըն-
կերային Ատենի մը կազմութիւնը պահանջեն
Դաշնակցութենէն : Այս երկու ազգայնոց ա-
նունները չահագործելով յաջողեցաւ նոյն իսկ
իր հետեւորդներուն աչքին փոշի փչել ու մաս-
նաճիւղերն ալ խափել , հրահանգ տալով ու-
նեց որ ամեն տեղ չէզոք՝՝ դասախարգի
պատկանող Հայերու նախաձեռնութեամբ ժո-
ղովներ գումարել տան և ընկերային ատեն
պահանջող համիմաստ նամակներ գրել տալով
զրկեն կուսակցութեանց խմբագրութիւննե-
րուն : Մինչդեռ Արփիար՝ իր յղացած գաղա-
փարը տակաւին հրապարակ չը նետած , ինք
չատ լաւ գիտէր Ընկ . Ատենի անյաջողու-
թիւնը և նոյն իսկ անկարելիութիւնը , բայց
գաղտնիքն արդէն այդ գիտնալուն մէջն էր ,
յորմէ միայն կականկալէր իր բարոյապէս ան-
կեալ վարկի բարձրացումը : Չէ՞ որ իր Ընկ .
Ատենի անյաջող ելքը իբր զէնք գործածելով
իրաւունք պիտի ունենար բացառանշէնութե
ան՝ կը տեսնէ՞ք Դաշնակցութիւնը խոյս կու-
տայ , ուրեմն ետ արդար եմ , և բոլոր անոնք
որ կամբաստանեն զիս , բացարձակ զրպար-
տիչներ են :

Արդ՝ գիտնալ պէտք է որ Արփիարի այս
ձեռնարկութեան նպատակը ուրիշ բան չէր ,

եթէ ոչ ինքզինքը արդարացնելու և իւրի պէս
ջրին վրայ ելլելու նորաձե հնարք մը կամ
réclame մը :

Փոքրիկ դիտողութիւն մը ևս աւելորդ չէ
ընել պ . պ . Իսքէնաէրի ու Յակոբեանի , որոնք
եթէ անկողմնակալօրէն ի սրտէ կը փափաքէին
Արփիարական խնդրոյն վերջ մը տալ , ըստ մեզ
յարմարագոյն առիթն էր , առաջարկուած խա-
ռ ը ն ժ ո ղ ո վ ի գումարումէն օգտուել և Ար-
փիարի խնդիրը մէկ ծախքով և մէկ յօդնու-
թեամբ կարգադրել : Չէ՞ որ ժողովը Ազգ . Խըն-
դիրներով պիտի զբաղէր ու համեալխութիւն
գցյացնելու համար յեղափոխութեան հետ ա-
ռ ը ն չ ու թ իւ ն ու ն ե ց ո ղ խ ն դ ի ի ն ե ր ը պ ի տ ի կ ա ր -
գ ա դ է ր : Ուրեմն աւելի լաւագոյն միջոցը չէ՞ր
արդեօք Արփիար և զինքը դատաստանի ենթադ-
կել ուղղող պարոնները աւելի անկեղծութեամբ
վարուէին Խառն Ժողովի գումարման խնդրոյն
մէջ և անոր իրականացման ոյժ տալով միան-
գամէն վերջ տային հրապարակային աղտոտ և
աննպատակ խլրտուկներու , ըս ի ը ս աւնե-
րու , բայց թո՛ղ ներուր մեզ ըսել թէ ներկոյ
դարուս մէջ ապրող մարդոց միջ եթէ հարկ լինի
անկեղծութիւն փնտռուիլ , Դիօպինէսը լապտե-
րով իսկ չէ կարելի գտնել . ահա ասոր համար
էր որ առաջարկուած ը ն կ ե ր ա յ ի ն ա -
տ ե ա ն ը դ ժ ր ա խ տ ա ր ա ր չ ը յ ա ջ ո ղ ե ց աւ :

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Աթէնք 20 Սեպտեմբեր 1900

Բարեկամ մը ինծի կուտար Վառնայի մէջ
հրատարակուող «Եարժումի» մէկ քանի թիւեր
ուր պ . Բ ա ժ ի Պօլսէն զրկած քանի մը թըղ-
թակցութիւններուն մէջ յաճախ արտասան-
ուած է անունս , փափաքելով միանգամայն
մղել զիս «քիչ մը հետաքրքրուիլ , հասկնալ թէ
ո՞վ է ի մ մ ա ս ի ս տեղեկութիւններ հա-
ղարդողը(*)» , ո՞վ եղած է արտասահմանէն զ ի ս
մատնողը :

Ձէի փափաքած բնաւ ո՛ւր է պատասխան
մը տալ այդ թղթակցութիւններուն , վախճալով
3-4 տարիներէ ի վեր հրապարակի վրայ լեց-
ուած այնքան անիմաստ ու անորակելի վի-
ճաբանութիւններուն վրայ նոր մըն ալ աւել-
ցնելէ . ստկայն միեւնոյն ատեն չը փափաքելով
ալ որ անձս առարկայ մը լլլայ ո՛ւր է թ ե ր -
հ ա շ իւ ն ե ր կ ա ր գ ա դ ր ե լ ու , կ ու ղ ե մ մ ի ա ն գ ա մ
ընդ միշտ պատասխանել քանի մը տողով :

* *

Առանց իր քանի մը հեղինակուն—կամ եթէ
կսւղէք քօղարկեալ նպատակաւոր—ակնարկու-
թիւններով զբաղելու , զորս բնաւ Անկեղծ Յե-
ղափոխականի մը չպիտի կրնայ վերագրել—
կը հաւատամ—պ . Բ ա ժ , պ է տ ք է ը ս ե մ թ է ա ն -
տա ր ք ք ր չ է ի ե ղ ա ծ մ ա տ ն ու թ ե ա ն ս ե տ ե ղ ի ու -
ն ե ց ա ծ ի ր ա ր ա ն ց ու մ ն ե ր ու ն պ օ լ ս ո յ ի մ է ջ : Կ ը
յայտարարեմ թէ զ ի ս մ ա տ ն ո ղ ը ա ր -
տ ա ս ա հ մ ա ն է ն չ է ե ղ ա ծ . ա յ լ պ օ լ -
ս է ն՝ ի ր ք թ ի ն տ ա ի է ն , թ է 99/00 կ ը
կ ա ս կ ա ծ ի մ թ է պ . Բ ա ժ ի ն ծ ի չ ա փ ի ն ք ն ա լ
լ աւ գ ի տ է ա յ ս ի ր ո ղ ու թ իւ ն ը ս ե թ ա -
գ ու ն ն պ ա տ ա կ մ ը կ ա յ ղ ա յ ն խ ե ղ ա թ իւ -
ր ե լ ու ն մ է ջ — հ աւ ա ն ա կ ա ն ա ր ա ր ց ա ր դ ի ր ա ր ու
վ ը ա յ ղ ի զ ու ա ծ ս ե կ ր կ ն ա կ ի փ ա կ ա ն ք ն ե ր ու
տ ա կ պ ա հ ու ա ծ ջ ա խ ջ ա խ ի չ զ օ կ ու մ է ն տ ու -
ն ե ր ու ն վ ը ա յ հ ա տ մ ը ն ա լ կ աւելցնէ «Հայ-
րենասիրական» բարձր պարտականութիւնը
կատարած լլլելու խղճի անդորրութիւնն ու-
նենալու համար :

* *

(*) Պօլիս՝ թուրք ոտակականութեան

Այս տողերը գրեցի ճիշդ անոր համար որ պ. Բ ա ժ ի ռ վերջին թղթակցութեան ծայրը կը շնչոտէր իր անկեղծութիւնը. փափաքելի է միշտ ինծի հաւատալ որ պ. Բ ա ժ bonne foi ու մը գրած ըլլոր այդ թղթակցութիւնը, որովհետեւ երբեք զէպքերը խեղաթիւրելով չէ որ պիտի կրնանք հասնիլ մեր այնքան բաղձացած նպատակին. ինչ արդիւնք կրնանք ունենալ ձրի ու անխիղճ զրպարտութիւններ նետելով ասոր անոր երեւին. թողունք ատիկայ միայն անոնց, որոնք կուզեն ձուկ որսալ պղտոր ջրին մէջ:

Կր կարծեմ թէ պ. Բ ա ժ և ուրիշներ գիտեն զգացումներս, հետեւաբար կը հաւատամ թէ ո՛ր և է չարամտութիւն չի պիտի նշմարեն այս տողերուս մէջ, որոնք, զուգէ, քիչ մը կը ծու ըլլան ու մի անգամ ընդ միշտ փակուած պիտի համարեն պօլիս մատնուելուս ու հալածուելուս լուրը:

Զ. Դ.

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԻ

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Փարիզ 26 Օգոստոս 1900

Սիրելի ընկեր

Միութեան խնդրոյ մասին պ. Մինաս Զեւարդի հետ ըրած աշխատութիւններս յուսալի է որ արդիւնաւոր ըլլան գէթ ապագային:

Յայտնի է թէ պ. Զեւարդ «Առաւելի» մէջ հրապարակաւ հրաւեր կատարեց ինչ որ նախ միութեան գործին ձեռնարկելու համար: Այս հրաւերին պատասխանեց մի միայն Դաշնակցական Հայ Յեղափոխական կուսակցութիւնը. իսկ Հնչակեան կուսակցութիւնը և վերակազմաւ Հնչակեանները (Մարտականները) լուսթիւն պահեցին: Ուստի պ. Զեւարդ յանձնարարեց ինձ գրել երկու վերջին կուսակցութեանց և խնդրել իրենց կարծիքը «Միութեան» պատ. թերթիդ առաջարկած կարեւոր և օգտակար հարցի մասին: Ինքը պ. Զեւարդ յանձն առաւ գրել իր կողմէ՝ Արմենական կուսակցութեան պետ պ. Մկրտիչ Փորթուկալեանին:

Պ. Մ. Փորթուկալեան անմիջապէս պատասխանելով պ. Զեւարդին յայտնեց թէ ինքը իր մասնաւոր համոզումներն ունի և թէ ժամանակին յայտնած է իր կարծիքն, ուստի այժմ լուսթիւն կը պահէ: Իսկ «Հնչակ» և «Մարտ» իմ գրութիւններուս պատասխանը տուին առանձին առանձին: Հնչակեան կուսակցութեան հետ ունեցած թղթակցութիւններս և իրենց պատասխանները տպուեցան նոյն իսկ «Հնչակ»-ի 30 Յուլիս 1900 թուակիր թերթին մէջ, ուրեմն աւելորդ է նոյնը կրկնել այստեղ: Իսկ Մարտի կուսակցութեան տուած պատասխանը հետեւեալն է:

ՆՈՐԱԿԱՅՄ ՀՆՉ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆՆ ԱՌ Պ. Կ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

Պ. Կ. Բասմաջեան Փարիզ
Լուսնոն 30 Յունիս 1900

Յարգելի Հայրենակից

Զեր Յուն. 20 թուակիրը ստացանք: Դաշնակցական կուսակցութիւնը իր «կամքին» բացարձակ տիրապետութիւնը կը գաւառի, և ուրիշ յեղափոխական մարմիններու ներքին կազմակերպութեանց միջամտելու յաւակնութիւնը ունի. այսպիսի կացութեան մէջ անօգուտ կը համարինք մենք իսկ նկատողութեան առնել Զեր առաջարկը:

Հնդուներեք մեր յարգանքը

Լ. ՅՐԱՆՔ

Այսչափով գոհ չպիտի մնանք ռակայն, այլ պ. Զեւարդի հետ պիտի աշխատինք վաղ կամ

անաղան իրականացնել «Միութեան» առաջարկը, համոզուած ըլլալով որ Ազգին ապագան և նոյն իսկ ներկան կախումն ունի մեր Յեղափոխական բոլոր մարմիններու ձուլումէն և համեմատելի գործունէութենէն:

Մէկ մարմին, մէկ սիրտ և մէկ գլուխ. հետեւաբար՝ մէկ ուղղութիւն:

Այս է մեր ամենուս փոփոգածը, զոյսանակ ձգելու որ ամէն մարդ իր ուղած կերպով և իր խելքին փշածին պէս գործէ:

Բարեկեղծ և յաջողութիւն մաղթելով եմ

Զերդ

Կ. Յ. Բասմաջեան

ԲԱՌԵՐՈՒ ՀԵՏ ՉԻ ԽԱՂԱՆԲ

Հնչակ իր Յուլիսի համարով մեր առաջարկած խառն ժողովոյ առթիւ Հնչ. կուսակցութեան կեդրոնի, միութեանականներու լիազոր ներկայացուցիչ Տիար Բասմաջեանի և խմբագրութեան միջիւ կատարուած բանակցութիւնները հրատարակելով, ինչպէս կը տեսնուի մեր առաջարկի ազդեցութեան կարեւորութիւնը չընծայելով ջերմապէս կ. պաշտպանէ իւր 1900 մարտ թուով արժարժած Հայկական Գօնկրէ սի գաղափարը, չի նայելով որ «Միութեան» 1899 Նոյեմբ. ամսին առաջարկած էր խառն ժողովը: «Հնչակ» յարգ. խմբագրութիւնը եթէ կը կարծէ գիտնալ թէ՛ մենք այդ ժողովը փոխանակ համադրուած անուանեալ խառն ամենամեծ ըլլալով թիւրութեան կամ հակա-ամութեան մէջ ինկած ենք, կը սխալի և պարզապէս բառերու հետ խաղալ կուզէ: Մեզ համար այդ երկու բառերը միեւնոյն նշանակութիւնը կրնան ունենալ, քանի որ առաջարկած ենք լոկ Ազգ. խառն ժողովի մը գումարը, որուն մէջ մեր Սուրբ Դատի հետ կապ ունեցող բոլոր խնդիրները պիտի կարգադրուին: Միեւնոյն ժամանակ պէտք է գիտնալ որ մենք ներքին կարգադրութեանց մասին վճիռներ արձակելու կամ խորհուրդներ տալու անկարող և անձեռնհաս կը գտնուինք: Այդ կուսակցութեանց պատուիրակներու հետ նախնական բանակցութիւնները կատարելու պաշտօն ունեցող յանձնարարի անգամներու գործն է: Այսու ամենայնիւ մենք ամենայն սիրով կը համակերպինք և յետ այսու փոխանակ խառն բառի, համագումար բառը պիտի գործածենք և պիտի ընդունինք որ Հնչակեան կուսակցութեան կեդրոնն, ինքն առաջարկած է այս ժողովի գումարը և ոչ թէ «Միութեան» մեր համար երբեք չընշանակութիւն չունի Եսի և Դուի ազգայնաս խնդիրը: Բաւական է որ այս օգտաշատ ժողովի գումարումը տեղի ունենայ, որու կողմէ ալ առաջարկուած լինի. մեզի համար նոյնն է:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

ԱԹԵՆՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՍՏՈՒԹԸ

1896ի չարաշուք պատահարներէն մազապուր Յունաստան ապաստանած փախստական հայերու ատեն, Արժ. Դարեգին Արժրոնիի քահանայութեամբ առաջին անգամ ըլլալով Աթէնքի մէջ հաստատուած էր Հայկական Մատուռ մը, որուն գոյութիւնը պահպանելու անկարող տեղացի սակաւաթիւ հայերն 2-3 ամիսէն փակած էին Մատուռը: Այս անգամ նոր ջանքեր ընելով յաջողեցան վերջապէս նոյն քահանայն Պուլկարիէն հրաւիրելով վերաբանալ Մատուռը, ուր առաջին անգամ տեղի ունեցաւ Ս. Պատարագի արարողութիւնը Սեպտ. 3 կիրակի առաւօտ:

Հայկական Եկեղեցւոյ արարողութեանց հետաքրքիր ոչ սակաւ յոյներ ալ փութացած էին ներկայ գտնուիլ: Ի սրտէ կը մաղթենք որ առաջին անգամուան պէս շուտով չը փակեն:

«ՀԱՅԱՍՏԱՆ» բառը աշխարհագրական քարտէսներէն կը վտարուի:

Վերջերս «Հայ» անունն դէմ թրքական

խուլ հալածանքը վերսկսած է: Կրթական տեղ-չութեան հրամանով նոր յանձնախումբ մը կազմուած է, որ պաշտօն ունի Հայ և օտար գրավաճառանոցները խուղարկելով գրաւել այն ամէն հրատարակութիւնները և աշխարհագրական քարտէսները, որոնք կը պարունակեն «Հայաստան» բառը:

Սուղարկիչ պաշտօնեաները՝ գերմանահայատակ գրավաճառ մը խանութը մանրամասն քննութիւններ կատարելէ վերջ վերանայարկը եղնել կուզեն. գերմանացիին նկատելով որ ըստ օրինի Դեպքանտսէն պաշտօնեայ չունին իրենց հետ, բռնեցնելու հարուածով կարտաքսէ թուրք պաշտօնեաները ու այս կերպով միջադէպը կը լրանայ:

— Ամասիոյ մէջ հրդեհ մը ծագելով քաղաքին մեծ մասը հրոյ ճարակ եղած է: Արկածեալներն վրաններու տակ կը բնակին:

— Հայկական վերջին կոտորածներու առթիւ Անգլիոյ և Ռուսիոյ առաջարկութեամբ Հայաստան զրկուած է միջազգային բնիչ յանձնախումբ մը, որուն պաշտօն տրուած է մանրամասն քննութիւններ կատարելով տեղեկագիր մը պատրաստել, որպէսզի կոտորածի հեղինակները պատժուին: Ռուս Դեպքանտարտքին գործոց նախարար թէվֆիք փաշայի բերանացի գիտողութիւն ըրել է թէ՛ Սուլթանի յորեկեանի նախնիք օրերու մէջ տեղի ունեցած այսպիսի եղեռնագործութեանց հեղինակները պէտք չէ անսպառի թողուլ:

— Պոլիս թուրք տղայ մը ձերբակալուած է ճիշդ այն պահուն, երբ պատին վրայ Սուլթանի դէմ բողոքներ պարունակող թղթեր կ'էփակցնէ: Տղան սաստիկ աանջանքներու ենթարկելով կը յաջողի ձերբակալել թեպադիշները, որոնք զինուորական դպրոցի ուսանող ժէօն թուրքերն են եղեր:

— Կ. պօլսէն կը գրեն թէ՛ տարածայնութիւն մը կը շրջի մայրաքաղաքիս մէջ, իրր թէ Սեպտ 10 կիրակի օրը հայերը ցոյց մը պիտի բնեն: Այդ առթիւ ոստիկանական իշխանութիւնը բազմաթիւ հայեր ձերբակալելով բանտը նետած էր: Օրմանեան պատրիարքը Դրան բողոքադիր մը մատուցանելով ձերբակալեաց արձակումը խնդրած էր. այժմ կը լսենք որ Բ. Դուռը այդ բողոքագիրն ինկատու առնելով խոստացեր է բանտարկեալները արձակել եթէ այդ որոշեալ օրը ցոյց տեղի չունենայ: Այս խնդրոյ առթիւ Պօլսոյ Հայ բանտարկեալներուց թիւը 220ի, իսկ գաւառներու բանտարկելու թիւը 500ի կը հասնի այժմ:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒՄ

Բնիկ Զմիռնիոյ նահանգի Տէնիզլիէն 32 տարեկան Մարտիրոս Գեորգեան անձը գեղին պիտուի. միջնահասակ, աշ յօնքին վրայ նշան մը ունի և արհեստը դերձակ. ուր գտնուելը ողջ կամ մեռած լլալը տեղեկութիւն ունեցող ազգայիններէն թախանձանօք կը խնդրուի փութով իմացնել իմբագրութեանս:

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Միլքոն Աւետիսեան Բաղէշէն 5-6 ժամ հեռաւորութեամբ Տատուան, և ըստ ոմանց որակ գիւղացի 40 սարկական անձն, որ Պանքի ցոյցէն Յունաստան ապաստանած և երկաթուղոյ ճանապարհը կաշխատէր, տարւոյս փետր. 10 ին Աթէնքի հիւանդանոցին մէջ մեռած և իւր անձանօթ հայրենակից Ալեքսան Զաքարեանի (Ուլլո) մօտ 220 տրախմի (7 նաբօլօն) թողած է: Հանգուցեալը դաւակնելու տէր ըլլալով, կը խնդրուի իւր հայրենակիցներէն որ գիւղի թաղական խորհրդին կամ Բաղէշի Առաջնորդարանին յանձնարարեն իմբագրութեանս վաւերագիր մը գրկել, որպէսզի գրամները գանձուելով որբերուն զրկուին:

Մեր յարգելի այն ընթերցողները, որոնք մեզ հետ հաշիւ ունին, եթէ կը բաղձան «Միութեան» ղոյութիւնը պահպանել, կը խնդրենք որ փութան իրենց պարտքը խրկել իմբագրութեանս:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԻՈՒԹԻՒՆ»-Ի